ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-23/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 20.12.2022թ. ժամը 12:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Բաղումյան

Հանձնաժողովի անդամ՝ Սերգեյ Աբրահամյան

Սուրեն Պռազյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ
2	«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ
3	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
4	ԳԵՎՈՐԳ ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԱՁ
5	Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները				
		«ՊԵՑՑՈ» ՍՊԸ	«ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ	ԳԵՎՈՐԳ ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԱՁ	Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ

		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ									
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	6897200	530000	530000	5499999	5499999	5880000	5880000	-	-	-	-
2	13895900	-	-	9999999	9999999	12778000	12778000	-	-	11500000	11500000
3	4052350	-	-	2899999	2899999	3100000	3100000	3050000	3050000	-	-

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

4.1 «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 1-ին չափաբաժնի և «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը՝ 2-3-րդ չափաբաժինների մասով կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.2 «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.3 «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Հավելված 1-ը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին, Հավելված 1.2-ով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.1.7 կետում սխալ է նշված գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, ինչպես նաև 1.2.1 կետում հայտարարագիրը ներկայացնող անձի անուն, ազգանունը, հայտում բացակայում է հայտի փաստաթղթերը ստորագրած անձին տրված լիազորագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ին շտկել 4.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4.5 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 22.12.2022թ., ժամը 12:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.12.2022թ ժամը 12:30-ին

5. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

5.1 «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են 4.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝
1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ին,
2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ին,
3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «ԲԱԳԱՌԹ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ-ի հայտը 1-3-րդ, ԳԵՎՈՐԳ ԳԱԼՍՏՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԱՁ-ի հայտը 3-րդ և Տիգրան Բալդրյան Արայի Ա/Ձ-ի հայտը 2-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատման արդյունքների մասին

7.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներն էլեկտրոնային ձևով՝ eauction համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Դավիթ Բաղումյան /նախագահ/

---------- Սերգեյ Աբրահամյան

---------- Սուրեն Պռազյան

---------- Աննա Սիմոնյան /քարտուղար/